Հայ բժիշկների միջազգային
12-րդ համագումարի մասնակիցներին

Ջերմորեն ողջունում եմ Հայ բժիշկների միջազգային 12-րդ համագումարի մասնակիցներին:

Շուրջ 40 տարի առաջ ստեղծված Հայ բժիշկների համաշխարհային կոմիտեն առ այսօր շարունակում է Հայաստանի ու Արցախի առողջապահական համակարգերի զարգացմանն ուղղված հայրենանվեր առաքելությունը: Պատահական չէ, որ Հայաստանի Հանրապետության Նախագահն այն գնահատել է որպես աշխարհասփյուռ հայության մասնագիտական ներուժի արդյունավետ կիրառման ցայտուն օրինակներից մեկը:

Այսօր, երբ Հայաստանի առողջապահության համակարգը շրջադարձային բարեփոխումների ժամանակաշրջան է ապրում, մենք ձեզ հետ միասին կարող ենք համագործակցությունն առավել նպատակային ու արդյունավետ դարձնել:

Համագումարի կազմակերպիչների հետ մենք քննարկումներ ենք ունեցել՝ նախանշելով Հայաստանի և Արցախի առողջապահական համակարգերի զարգացմանը խթանող ուղղությունները: Խոսքս ժամանակակից կլինիկական ուղեցույցների ու գործելակարգերի մշակման և ներդրման, հիվանդանոցների կառավարման, մասնագետների՝ առաջիկա ծրագրերից բխող վերապատրաստումների կամ միջուկային բժշկության զարգացման մասին է:

Ես մեծ ափսոսանք եմ ապրում, որ հնարավորություն չունեցա անձամբ մասնակցելու ներկայացուցչական այս համաժողովին: Փոխնախարարը ձեզ հանգամանալից կներկայացնի Հայաստանի առողջապահական համակարգի արդի իրավիճակն ու զարգացմանն ուղղված մեր ծրագրերը: Եվ հույս ունեմ, որ 12-րդ համագումարը ևս շրջադարձային կլինի՝ համագործակցության հեռանկարներ բացելով Հայաստանում իրականացվող բարեփոխիչ ծրագրերին գործուն աջակցություն կապահովվի:

Հարգելի բարեկամներ,

Իմ երախտագիտությունն եմ հայտնում համագումարի կազմակերպիչներին, բոլորիդ մաղթում ամուր առողջություն և բարձր տրամադրություն:

Լիահույս եմ, որ արգասաբեր ձեր աշխատանքը համատեղ նոր ծրագրերի հիմք կհանդիսանա:

Հարգանքով՝ ՀՀ առողջապահության նախարար Լևոն Ալթունյան